ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

18. ԴԱՍԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

1 Գրելու տախտակը ներկված էր սևով, իսկ այն ծածկող մոմը սպիտակ էր: Երբ ստիլուսով գրում էին մոմի շերտի վրա, տակից սկսում էին երևալ սև տառերը: Այստեղից էլ առաջացել է «սևով սպիտակի վրա գրել» արտահայտությունը:

2 Ըստ ավանդության՝ առաջին անգամ մրցումները Օլիմպիայում կազմակերպել է Հերակլեսը՝ Ավգյան ախոռները մաքրելուց հետո: Իր կոչով օգնության եկած հունական հերոսներին պարգևատրելու համար նա կազմակերպել է սպորտային մրցումներ, որոնք էլ դարձել են Օլիմպիական խաղերի նախատիպը: ***Առաջին Օլիմպիադան տեղի է ունեցել Ք.ծ.ա. 776 թ.:***

Օլիմպիական սրբավայրը

Միրոն, Դիսկոբոլը

Պոլիկտեպ, Նիզականեպը

Մրցումներից 2 ամիս առաջ և հետո հայտարարվում էր Սրբազան խաղաղություն: Աստվածների վրեժխնդրության սպառնալիքով այդ ընթացքում Հունաստանում դադարեցվում էին պատերազմները: Մարզիկներին և հանդիսատեսներին ժամանակ էր պետք Օլիմպիա հասնելու համար: Խաղերը տեղի էին ունենում հուլիսին և տևում էին մոտ մեկ ամիս: Մրցում էին ըմբշամարտում, հնգամարտում, բռնցքամարտում, թռիչքի տարբեր ձևերում, նիզակի և սկավառակի նետումում:

Հունական բոլոր պոլիսներից, անգամ հեռավոր գաղութներից, գալիս էին լավագույն մարզիկները: Մասնակցել կարող էին միայն ծագումով հույները, այլազգիների մասնակցությունն արգելվում էր: Մարզիկները մրցում էին մերկ, օլիմպիական կարգով՝ պարտվողը դուրս էր մնում:

Մրցումների առաջին օրը հանդիսավորությամբ վառում էին Օլիմպիական կրակը, ապա կայանում էին մասնակիցների և դատավորների երդման արարողությունը և հանդիսավոր շքերթը հանդիսականների առջև:

1. Օլիմպիական մարզադաշտը
2. Օլիմպիական Զևսի տաճարը
3. Օլիմպիական կրակի տեղը
4. Հերա աստվածուհու տաճարը
5. Կացարաններ ուխտագնացների համար
6. Սպորտային դատավորների կացարանը
7. Տարբեր մարզասրահներ
8. Մարզիկների կացարանը
9. Քրմերի կացարանները
10. Մարզադաշտի մուտքը
11. Զևսի զոհասեղանը

Օլիմպիական կառույցների ընդհանուր տեսքը

Մրցումների վերջին օրը՝ Օլիմպիական կրակը հանգցնելուց առաջ, ամեն մի մարզաձևում հաղթողներին պարգևատրում էին ***արմավենու ճյուղով, ձիթենու ճյուղերից հյուսված պսակով և ձիթենու յուղով լի սափորով***: Օլիմպիական ավանի ծառուղիներում կանգնեցվում էին ***օլիմպիոնիկների՝ հաղթողների*** արձանները: Հայրենի քաղաքում հաղթողին դիմավորում էին մեծ հանդիսավորությամբ, ազատում էին հարկերից և այլ արտոնություններ տալիս: Չէ՞ որ իր հաղթանակով նա փառք և ճանաչում էր բերել հայրենի պոլիսին:

Մարզադաշտի մուտքը

Օլիմպիական մարզադաշտ

3

Մրցումները անցկացվում էին ***Դելֆիքում՝ Պառնաս*** լեռան լանջին, որտեղ գտնվում էր ***Ապոլոնի տաճարը և գուշակավայրը:*** Հին հույները հավատում էին, որ արվեստների հովանավոր Ապոլոնը հաճախ զբոսնում է Պառնաս լեռան լանջերին՝ շրջապատված 9 մուսաներով, որոնցից յուրաքանչյուրը հովանավորում է արվեստի մի բնագավառ:

Ապոլոնը մուսաների հետ: Միջնադարյան նկար

Ահա ինչու, սպորտային խաղերից բացի, ***այստեղ անցկացվում էին մրցումներ բանաստեղծների, գրողների, թատերագիրների, քանդակագործների, երաժիշտների և նկարիչների միջև: Հաղթողները պարգևատրվում էին դափնեպսակով:***

Հաղթողի դափնեպսակ

Դելֆիք. արվեստի մրցախաղերի անցկացման վայրը

Դելֆիք. սպորտային մրցումների մարզադաշտը